

LIFE – «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» ծրագրի

ՏԵՂԵԿԱԳԻՐ

#1 - Մայիս 2012



Հարգելի գործընկերներ,

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» (Livelihood Improvement through Fostered Employment - LIFE) ծրագրի էլեկտրոնային «LIFE Տեղեկագիր» պարբերականի անդրանիկ թողարկումը:

Տեղեկագրի միջոցով ընթերցողներին կտրամադրվեն տեղեկություններ LIFE ծրագրի գործողությունների և միջոցառումների մասին, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց ուղղված այլ ծրագրերի և զբաղվածությանն առնչվող հետազոտությունների, դասընթացների ու սեմինարների, համաժողովների, կլոր սեղանների և բազմաթիվ այլ միջոցառումների մասին:

Տեղեկագրի այս թողարկումը կպատմի ծրագրի նպատակի և խնդիրների, գործընկեր կազմակերպությունների, ինչպես նաև այն գործողությունների և միջոցառումների մասին, որոնք իրականացվել են ծրագրի առաջին ամիսների ընթացքում:

Մենք հուսով ենք, որ պարբերականը կլինի հետաքրքիր ու տեղեկատվական և երախտապարտ կլինենք պարբերականի բովանդակության և դիզայնի վերաբերյալ Ձեր արձագանքների ու առաջարկությունների համար:

Այս համարում կարդացեք՝

- *Մեկնարկել է «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» ծրագիրը*
- *Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խնդիրների վերաբերյալ դասընթացներ*
- *Գործատուների հետ կլոր սեղան քննարկում Արտաշատում*
- *Նախապատրաստվող միջոցառումներ*



Հայաստանում պաշտոնապես գրանցված 179 257 հաշմանդամություն ունեցող անձանց մեծ մասը շարունակում է դիմակայել հասարակության կողմից հաշմանդամության թյուր ընկալմանը, կանոնակարգերի ոչ պատշաճ կիրառմանը և աշխատավայրում խտրականության դրսևորումներին:

Վերջին տարիներին Հայաստանում զգալի բարեփոխումներ են իրականացվել հաշմանդամություն ունեցող անձանց (ՀՈԻԱ) խնդիրների լուծումը խթանելու ուղղությամբ, այնուամենայնիվ ՀՈԻԱ զբաղվածության կարիքները հիմնականում բավարարված չեն, և երկրում ամբողջական մոտեցում ցուցաբերելու խիստ կարիք է զգացվում:

Այս խնդիրներին արձագանքելու նպատակով «Մեյվ դը չիլդրեն»-ը, իր գործընկերներ «Ակտիվա» միջազգային հիմնադրամի, «Ունիսոն» ՀԿ-ի, «Էյջ-Դի-Փի» հիմնադրամի և «Լիարժեք կյանք» ՀԿ-ի հետ համատեղ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ֆինանսավորմամբ 2012-2015թթ. կիրականացնի «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» ծրագիրը, որի նպատակն է խթանել աշխատունակ տարիքի ՀՈԻԱ մասնագիտական ուսուցումը, աշխատանքի տեղավորման հնարավորությունները՝ աշխատանքի միջոցով նպաստելով նրանց կենսական խնդիրների լուծմանն ու որպես հասարակության լիիրավ անդամի ինտեգրմանը: Ծրագիրը կիրականացվի Արարատի, Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերում ու Երևանի 10 համայնքներում:

Փետրվարին ծրագիրը ներկայացվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնյաներին, որոնք ողջունելով նոր ծրագրի իրականացումը առաջարկեցին ներկայացնել և քննարկել այն նաև Հաշմանդամության հարցերով ազգային հանձնաժողովի ընդլայնված նիստի ժամանակ:

Ազգային հանձնաժողովի ընդլայնված նիստի ընթացքում ողջունելով ծրագիրը՝ ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնը նշեց, որ աշխատանքով ապահովված լինելը շատ կարևոր է ՀՈԻԱ-ների համար, իսկ «...որպեսզի ծրագիրը հաջողված լինի, մենք պետք է համագործակցենք պետական հաստատությունների և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության հետ: Մենք նաև լրատվամիջոցների շարունակական հետաքրքրվածության կարիքն ունենք, որպեսզի բարձրացնենք հանրային իրազեկությունն այս բնագավառում»:

Ծրագիրը ներկայացվել է նաև Արարատի, Շիրակի, Լոռու և Գեղարքունիքի Հաշմանդամության հարցերով մարզային հանձնաժողովների անդամներին:

LIFE ծրագրի պաշտոնական մեկնարկի նկարները տեսնելու համար սեղմեք [այստեղ](#):



Ազգային հանձնաժողովի ընդլայնված նիստը

Նկարում (ձախից՝ աջ). «Մեյվ դը չիլդրեն»-ի հայաստանյան ներկայացուցչության տնօրեն Իրինա Մադոյան, ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության տնօրեն Ջաթինդեր Չիմա, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արթուր Գրիգորյան, ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ջեմմա Բադդասարյան, LIFE ծրագրի տնօրեն Ջինա Սարգիզովա, Երևանի քաղաքապետի տեղակալ Կամո Արեյան



«Մեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ»-ը երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված ամենամեծ շարժումն է աշխարհում: Այն ներառում է 29 ազգային կազմակերպություններ, որոնք աշխատում են ավելի քան 120 երկրներում: Կազմակերպության առաքելությունն է անմիջական ու տնական փոփոխություններ ստեղծել երեխաների կյանքում: 1993թ. հիմնվել է «Մեյվ դը չիլդրեն»-ի հայաստանյան գրասենյակը: Այդ ժամանակից ի վեր իրականացվել են վերականգնողական և զարգացողական մի շարք ծրագրեր՝ օգնություն ցուցաբերելով Հայաստանի ամենախոցելի երեխաներին ու նրանց ընտանիքներին: Երեխաների պաշտպանության, առողջապահության, կրթության և սոցիալական բնույթի նախաձեռնություններն օգնել են բարելավելու ամենակարիքավոր բնակչության տարրական կենսապայմանները՝ համայնքային ծրագրերի իրականացման և տեղական կարողությունների զարգացման միջոցով: Իր ծրագրերում ներառելով տեղական ՀԳ-ներին՝ «Մեյվ դը չիլդրեն»-ը օգնում է նրանց զարգանալ և վերաճել քաղաքացիական հասարակության կարող կազմակերպությունների ու նպաստել Հայաստանի կարիքավոր բնակչության բարեկեցությանը: Իր հիմնադրումից ի վեր կազմակերպությունը Հայաստանում իրականացրել է ավելի քան 900 ծրագիր՝ ի նպաստ երկրի ավելի քան 500 համայնքների:

Մանրամասների համար կարող եք այցելել www.savethechildren.net



Հասուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն» ՀԳ-ն հիմնադրվել է 2002թ.-ին ՀՌԻԱ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության առաքելությամբ: «Ունիսոնի» գործունեությունը, մասնավորապես, ուղղված է հաշմանդամների վերաբերյալ հասարակության իրազեկվածության բարձրացմանը: «Ունիսոնը» սերտորեն համագործակցում է միջազգային և տեղական կազմակերպությունների, լրատվամիջոցների և պետամբիոնների հետ՝ նպատակ ունենալով խթանել մասշտաբի միջավայրի ապահովումը, ներառական կրթությունը, ՀՌԻԱ զբաղվածությունը և մշակութային ինտեգրումը, ինչպես նաև նպաստել հասարակության կողմից հաշմանդամներին որպես իրավահավասար հայրենակիցներ և գործընկերներ ընդունմանը: Այդ նպատակներին հասնելու համար «Ունիսոնը» հաջողությամբ կիրառում է ինչպես ավանդական, այնպես էլ նորարարական մեթոդներ՝ հաշմանդամ կանանց գեղեցկության մրցույթների և աշխատանքի տոնավաճառների անցկացում, տեսաառևտրականների պատրաստում, մանկավարժների և աշակերտների համար թրենինգների անցկացում և այլն: «Ունիսոնը» ստեղծել է www.disability.am, www.jobs.disability.am, www.disabilitynet.info և մի շարք այլ կայքեր: Մանրամասների համար կարող եք այցելել

<http://unison.am>



«Ակտիվա» միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) կազմում է «Ակտիվա» կազմակերպության մի մասը: Հիմնադրամի առաքելությունն է հաշմանդամություն ունեցող անձանց վերաինտեգրումը աշխատաշուկա: ԱՄՀ-ն ուղղորդում և աջակցում է այն տղամարդկանց և կանանց, ովքեր հաշմանդամության պատճառով արգելքների են հանդիպում աշխատաշուկա մուտք գործելու հարցում: Հիմնադրամն առավել ակտիվ է Եվրոպական միության (ԵՄ) նոր անդամ պետություններում և ԵՄ սահմանակից երկրներում: Զբաղվածության ծրագրեր հաշմանդամություն ունեցող անձանց համար իրականացվել և իրականացվում են Նիդեռլանդներում, Գերմանիայում, Չեխիայում, Խորվաթիայում, Սլովակիայում, Սլովինիայում, Թուրքիայում, Մոլդովայում և Հայաստանում: ԱՄՀ աշխատանքներ է տանում աշխատավայրում, կազմակերպություններում և դպրոցներում վերաբերմունքի և խտրականության վերացման հարցում:

Մանրամասների համար կարող եք այցելել www.activa.nl



Հյուսիսային Գիզնիթի Ընդ Փիս Հիմնադրամի (HDP) առաքելությունն է համայնքային, անհատական, ընտանեկան, կրթական, մշակութային ծրագրերի միջոցով խթանել արժանապատիվ և խաղաղ կյանք Հայաստանում: Հիմնադրամի շահառուներն են գյուղական համայնքների բնակիչները, սոցիալապես անապահով անձինք, աշխատաշուկայում անմրցունակ անձինք՝ մասնավորապես հաշմանդամություն ունեցողները, ծնողազուրկ երեխաները, կրթությունից տարբեր պատճառներով դուրս մնացած երեխաները, մասնավորապես՝ հաշմանդամ երեխաներ: HDP հիմնադրամն առաջարկում է լուծումներ Հայաստանում սոցիալական և տնտեսական խնդիրների հաղթահարման համար՝ իրականացնելով ծրագրեր վերոնշյալ թիրախային խմբերի համար:

Արդյունավետ կերպով համագործակցելով միջազգային, ազգային և տեղական գործընկերների հետ՝ կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ջանում է չկրկնել արդեն իսկ ներդրված նախաձեռնությունները, այլ ընդհակառակը. Հայաստանում ներդնել նոր մոտեցումներ, լուծումներ և գործիքներ, որոնք կօգնեն հաջողությամբ իրականացնել ընթացիկ ծրագրերը, ինչպես նաև կհեշտացնեն նոր և առաջավոր փորձի տեղայնացումը երկրում:

Կազմակերպության աշխատանքներին առավել մանրամասն ծանոթանալու համար այցելեք <http://www.hdpf.org>



«Լիֆաժեք կյանք» բարեգործական հասարակական կազմակերպության առաքելությունն է հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանությունը և հզորացումը՝ կրթական, իրավական, առողջապահական, սոցիալական և շատ այլ ոլորտներում, և առավելագույնս ներգրավումը՝ հանրային իրազեկման, հանրային քաղաքականության բարելավման և տեղեկատվական ծառայությունների միջոցով: Կազմակերպությունը հիմնադրվել է 1998 թ. հուլիսի 17-ի խորհրդանշական այն օրը, երբ, ըստ Աստվածաշնչի, Նոյան տապանը հանգրվանեց Արարատ լեռան զագաթին՝ մարդկությանը պարզեցնելով կյանքը վերսկսելու նոր հույս և հնարավորություն: Մենք հավատում ենք, որ յուրաքանչյուր անձ պետք է ունենա լիարժեք կյանքի հնարավորություն, այնպես, ինչպես յուրաքանչյուր թռչուն կարող է վայելել ճախրանքի հաճույքը: Կազմակերպությունը հիմնադրվել և ղեկավարվում է հաշմանդամություն ունեցող անձանց կողմից: Կազմակերպության անցած ճանապարհը և հաջողություններն այն գորեղ փաստարկներն են, որոնք անհերքելիորեն վկայում են, որ հաշմանդամությունը չի կարող խոչընդոտել հասարակական կյանքին ակտիվ մասնակցությանը:

Կազմակերպության աշխատանքներին առավել մանրամասն ծանոթանալու համար այցելեք <http://www.fulllife.am/>

Դասընթացներ



LIFE ծրագրի բաղադրիչներից է զբաղվածության կենտրոնների, ծառայություններ մատուցողների, հաշմանդամության խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնագիտական վերապատրաստումները և ներուժի հզորացումը: Նշված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների թվին են պատկանում հետևյալ գործողությունները.

Ներածական դասընթաց. ապրիլի 2-ից 5-ը «Ակտիվա» միջազգային հիմնադրամի փորձագետները Երևանում, Գյումրիում, Վանաձորում և Գավառում 29 զբաղվածության կենտրոնների աշխատակիցներ հրավիրվել էին ներածական դասընթացի՝ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հիմնախնդիրների վերաբերյալ: Դասընթացի ժամանակ մասնակիցներին ներկայացվեց LIFE ծրագիրը, միջազգային և տեղական գործընկեր կազմակերպությունների ձեռքբերումներն ու փորձը, ինչպես նաև խոսեցին MAST թեսթավորման սարքի կիրառման և արդյունավետության մասին: Մասնակիցները տեղեկացան, որ ծրագրի շրջանակներում Հայաստան կներմուծվեն և ծրագրում ընդգրկված 29 զբաղվածության կենտրոններին կտրամադրվեն MAST թեսթավորման սարքեր: Ընդհանուր առմամբ ներածական դասընթացների շրջանակներում վերապատրաստվեցին զբաղվածության կենտրոնների 58 աշխատակիցներ և գործընկեր կազմակերպությունների 6 սոցիալական աշխատողներ, ովքեր ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները կփոխանցեն ծրագրի մյուս շահառուներին:

Սեղմեք այստեղ [Վանաձորում](#) և [Գավառում](#) տեղի ունեցած դասընթացի մասին տեսանյութերը դիտելու համար:



MAST թեսթավորման դասընթաց. ա.թ. մայիսի 2-ից 4-ը ՀՀ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության (ԶՊԾԳ) 10 ավագ վերապատրաստողների և գործընկեր ՀԿ-ների սոցիալական աշխատողների մասնակցությամբ անցկացվեց դասընթացավարների վերապատրաստում (ToT) MAST թեսթավորման վերաբերյալ: Դասընթացը նպատակ ուներ վերապատրաստվողներին ներկայացնել թեսթավորման սարքի հնարավորությունները և առավելությունները: Մասնակիցները պրակտիկ

գիտելիքներ ձեռք բերեցին սարքի կիրառման ու առանձնահատկությունների վերաբերյալ:

Նախատեսվում է, որ միջազգային մասնագետների կողմից անցկացվող MAST թեսթավորման դասընթացների շարքն անցնելուց հետո, վերապատրաստված ԶՊԾԳ ավագ դասընթացավարները նմանատիպ դասընթացներ կվարեն զբաղվածության կենտրոնների 58 աշխատակիցների համար:

Կյանքի հմտություններ և աշխատանքի պատրաստակամություն. ապրիլի 23-ին «Ունիսոն» կազմակերպությունը ծրագրի գործընկեր կազմակերպությունների համար անցկացրեց «Կյանքի հմտություններ և աշխատանքի պատրաստակամություն» թեմայով դասընթացավարների վերապատրաստում: Վերապատրաստման մասնակիցները պետք է ՀՈՒԱ-ների համար վարեն նմանատիպ վերապատրաստումներ և զինեն նրանց գիտելիքներով և կյանքի հմտություններով:

Աշխատանք գործատուների հետ

Կլոր սեղան քննարկում Արտաշատում - մայիսի 22-ին LIFE ծրագրի գործընկեր Հյուսիսային Դիգնիթի Ընդ Փիս (HDP) հիմնադրամը Արտաշատի զբաղվածության մարզային կենտրոնում կազմակերպել էր կլոր սեղան քննարկում Արարատի մարզի գործատուների հետ՝ վերհանելու ՀՈՒԱ զբաղվածության հիմնախնդիրները, դրանց վրա ազդող գործոնները և հաշմանդամների աշխատանքի տեղավորման խոչընդոտները: Քննարկմանը մասնակցում էին Արարատի մարզի գործատուները, ինչպես նաև մարզային զբաղվածության կենտրոնների, ԶՊԾԳ, «Սելվ դը չիլդրեն» կազմակերպության, ՀԿ-ների և ԶԼՄ ներկայացուցիչներ:

Քննարկում կլոր-սեղանի ընթացքում քննարկվեցին հաշմանդամության ոլորտի քաղաքականության, հաշմանդամների ինտեգրման և աշխատանքի իրավունքի խնդիրները: Շեշտադրվեցին այն գործոնները, որոնք բացասաբար են անդրադառնում հաշմանդամների ինտեգրմանը աշխատաշուկա, մասնավորապես՝ ընտանիքի գերխնամքը, միջին մասնագիտական հաստատություններում հաշմանդամ երիտասարդների համար տեղերի սահմանափակ թիվը, իրազեկության պակասը մարզում և հանրապետությունում, աշխատանքային ունակությունների ոչ ճիշտ կամ ոչ օբյեկտիվ գնահատումը, տրանսպորտի անմատչելիությունը և հաշմանդամների տեղափոխումը:



Քննարկման ընթացքում ներկայացվեց ՀՈՒԱ զբաղվածության ոլորտին առնչվող միջազգային և ՀՀ օրենսդրական դաշտը, աշխատանքի ընդունելու դեպքում ընթացակարգը: ԶՊԾԳ ներկայացուցիչ Լիզա Ղիսայանը խոսեց այն պետական ծրագրերի մասին, որոնք ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի իրավունքի իրացմանը:

Ներկա գտնվող մի շարք գործատուներ արդեն իսկ իրականացնում են աշխատատեղի հարմարեցման ծրագրեր զբաղվածության կենտրոնների հետ համագործակցությամբ և ունեն հաշմանդամություն ունեցող աշխատակիցներ: Մյուս գործատուներն էլ պատրաստակամություն հայտնեցին համագործակցել այս ոլորտում: Նրանց թվում էր նաև կահույքագործական «Մակագոն» ՍՊԸ տնօրեն Մանվել Մկրտչյանը, ում հետ ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ աշխատանքի վերցնելու վերջերս HDP հիմնադրամի կողմից «փայտի փորագրություն» մասնագիտությամբ վերապատրաստված հաշմանդամ մի երիտասարդի:

Նախապատրաստվող միջոցառումներ

- *Հունիսի 6-ից 8-ը կկազմակերպվի «Փորձառնական մեթոդալոգիա»-յի վերաբերյալ մասնագիտական վերապատրաստում Գյումրիի աշխատանքի վերականգնողական կենտրոնի աշխատակիցների, ՀԿ դասընթացավարների, ինչպես նաև տարածքային զբաղվածության կենտրոնի աշխատակիցների մասնակցությամբ: Դասընթացը կվարեն Նիդեռլանդներից ժամանած միջազգային փորձագետները:*
- *Հունիսի 11-ից 13-ը նախատեսվում է «Դասընթացների վարման և ուսումնական/մեթոդական նյութերի մշակման և բարելավման» վերաբերյալ դասընթաց ԶՊԾԳ 10 ավագ վերապատրաստողների, ՀԿ-ների սոցիալական աշխատողների համար: Դասընթացը կվարեն Նիդեռլանդներից ժամանած միջազգային փորձագետները:*
- *Հունիսի 28-ին «Լիարժեք կյանք» ՀԿ-ն կկազմակերպի համաժողով, որի նպատակն է ներկայացնել ՀՀ չորս մարզերում իրականացված իրավիճակային/ էքսպերտային սոց.հարցման և վերլուծության արդյունքները: Համաժողովը կանցկացվի Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Ամեն ինչ մեզ համար՝ մեզ հետ» ծրագրի հետ համագործակցությամբ:*

Ուշադրություն

Ի գիտություն հետազոտողների, հասարակական և մասնավոր սեկտորի. ՏԵՂԵԿԱԳԻՐԸ հնարավորություն է տալիս լուսարանել հաշմանդամության ունեցող անձանձ ուղղված ծրագրերը/հետազոտությունները: Հետաքրքրվածության դեպքում կարող եք դիմել LIFE ծրագրի օգնական Մարիա Գևորգյանին՝ Maria.Gevorgyan@savethechildren.org էլ. հասցեով:



«Մեյվ դը չիլդրենը» երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ամենամեծ կազմակերպություններից է աշխարհում: Այն ներառում է 29 ազգային կազմակերպություններ, որոնք գործում են ավելի քան 120 երկրներում:

«Մեյվ դը չիլդրեն»-ի հայաստանյան ներկայացուցչություն
Հասցեն՝ ՀՀ, Երևան 0023, Ագաթանգեղոսի 2ա, 2-րդ հարկ,
Հեռ.՝ (010) 56-23-35, ֆաքս՝ (010) 52-07-60
Էլ. փոստ՝ Armenia@savethechildren.org
Վեբ կայք՝ www.savethechildren.net

